կընդունէ բոլոր զօրքերի հրամանատարութիւնը: Ամբողջ Բորչալուի գաւառի մաքրագործման և մինչև Թիֆլիսի նահանգի սահմանները հեռանալու պահանջը անպայման է»:

Իսկ մէկ օր յետոյ, հոկտ. 22-ին, գինու. նախարար Գէորգաձէն հեռագրեց նոյն Գոգուաձէին, թէ՝ «քանի որ Հայաստանի ներկայացուցիչ Ջամալեանը իր կառավարութիւնից դեռ չի ստացել մեր դիմումի պատասխանը, հրամայում եմ շտապով գրաւել այն գիծը, որ մենք բռնում էինք թիւրքերի հեռանալուց առաջ և ոչ ոքի թոյլ չտալ անցնելու ո՛չ այդ գծի այն կողմը, ո՛չ այս կողմը: Մեր զօրքերը դեռ չպէտք է անցնեն այդ գիծը»: Եւ մի լրացուցիչ հեռագրով էլ հրամայեց՝ «առանց վրաց կառավարութեան արտօնութեան Հայաստանից ոչ ոքի թոյլ չտալ մտնելու Վրաստան»:

Այսպէս, ուրեմն, վրաց կառավարութիւնը պատրաստւում էր զէնքի ուժով ստիպելու հայերին, որ դուրս գան Լոռիից՝ վրացիներին յանձնելով և Շահալի կայարանը: Ի՞նչ է այս, եթէ ոչ պատերազմի որոշում, որովհետև վրաց ղեկավարները չէին կարող չհասկանալ, որ հայերը յօժար կամքով չէին կատարելու իրենց պահանջը: Նրանց թև էր տալիս Գերմանիայի հովանաւորութիւնը: Անշուշտ, նրանք հաւատում էին, որ զինուած բախումի դէպքում, գերմանացիները կը միջամտեն ու կը ստիպեն հայերին կատարել վրացական պահանջը:

Եւ, յիրաւի, մինչ Գէորգաձէն պատերազմի պատրաստութիւններ էր տեսնում, Գերմանիայի զինուորական ներկայացուցիչ Ֆոն-Քրեսը աշխատում էր համոզել Հայաստանի ներկայացուցիչ Ջամալեանին ընդունել վրացիների վերջնագիրը և առանց արիւնհեղութեան դատարկել «վրացական» հողը: Ջամալեանի հարցումին, թէ՝ արդեօք Գերմանիան կը խառնի՞ հայ-վրացական սահմանային վէճին, Ֆոն-Քրեսը պատասխանեց դրական մտքով. Գերմանիան, որպէս Վրաստանի դաշնակից, պարտաւորուած է պաշտպանել վերջինիս երկիրը այն սահմաններում, ինչ սահմաններում որ ցոյց կը տայ վրաց կառավարութիւնը: Այսպիսով, պարզ էր դառնում վրաց կառավարութեան լայն ախորժակն ու վճռական դիրքը:

Ի՞նչ կարող էին անել այս պայմաններում հայերը:

Վրացիների վերջնագիրը Երևանում ստացուեց հոկտ. 21-ի գիշերը և անսահման զայրոյթ ու վրդովում առաջ բերեց բոլոր շրջաններում: Հայաստանի Խորհրդի հոկտ. 22-ի նիստում վարչապետ Քաջազնունին արաւ հետևեալ զեկուցումը. —

«Մեր հողի մի մասը, Լոռի-Փամբակի շրջանում, գրաւուած էր թիւրքական զօրքերով: Կառավարութիւնը մի քանի անգամ պաշտօնական բողոքներ է ներկայացրել թիւրքաց կառավարութեան, ինչպէս նաև գերմանական և աւստրիական միսիաներին ու գերմանական կառավարութեան և միշտ մի պատասխան է ստացել, որ գրաւումը ժամանակաւոր է: Հոկտեմբեր 5-ին Խալիլ փաշան Երևանում յայտնեց մեզ, որ հրաման է ստացել դատարկել վերոյիշեալ երկրամասերը: Անմիջապէս մեր և թիւրքաց շտաբները գծեցին այդ գործողութեան ծրագիրը, որը սկսուեց հոկտ. 18-ին և առանց որևէ միջադէպի շարունակուեց մինչև հոկտ. 21-ը, երբ գիշերւայ ժամը 12-ին հեռագիր ստացանք Դրօից այն մասին, որ «վրացիները վերջնագիր են ներկայացրել՝ դատարկելու համար մեր ստացած շրջանը մինչև Շահալի՝ ու